Հայրենի՛ հողի վրա եմ նորից....

«Հայրենի գետի զմրուխտ ափերին
Մեր հին տնակն է կքել մենավոր.
Ա՜խ, ես հեռավոր ճանապարհներին
Քայլում եմ հիմա մենակ ու մոլոր…»
Ավ. Իսահակյան

Վարպետի տուն-թանգարանն արդեն 60 տարեկան է...

Քաղաքի կենտրոնում, սակայն քաղաքային աղմուկից ու եռուզեռից առանձնացած, գողտրիկ մի վայրում է գտնվում այն տունը, որտեղ Վարպետն ապրել է իր կյանքի վերջին տասը տարին: Տունն այժմ գործում է որպես Մեծ բանաստեղծի թողած հարուստ ժառանգությունն ամփոփող մշակութային հաստատություն:

Քաղաքի գողտրիկ հատվածում գտնվող այս տունը նաև Վարպետի կյանքի վերջին հանգրվանն էր հայրենիքում…

Պանդխտության մեջ գտնվող բանաստեղծը, դեգերելով օտար, ամայի ճանապարհներին, անհուն սիրով և քնքշանքով էր հիշում իր հեռվում թողած հայրենիքը, երբեմն մտքով թռչում էր դեպի հայրենի եզերքը, դեպի պաշտելի մայրը…

Օտարության մեջ անգամ Վարպետի միտքն ու հոգին հայրենիքի հետ էր, նրա սիրով ու կարոտով տոգորված:

«…Նայել եմ Մոնբլանին, բայց տեսել եմ Մասիսը, կանգնել եմ Աթենքի Պարթենոնի առաջ, բայց զգացել եմ Երերույքը և Հռիփսիմեի տաճարը: Լսել եմ Նեապոլի ժողովրդական երգերը, բայց հուզվել եմ մեր ժողովրդի երգով»: Ավ. Իսահակյան

Հայրենի եզերքի կարոտը ստիպեց բանաստեղծին լքել Եվրոպայի ապահով կյանքն ու վերադառնալ Հայաստան:

Ասում են՝ հայրենիք վերադառնալուց հետո ամեն անգամ Իսահակյանը առիթը բաց չէր թողնում Հայաստանի որևէ վայրում կրկին հայտնվելու, տարիների կարոտը վերապրելու համար...

Պլեխանով (ներկայիս՝ Զարոբյան) փողոցում գտնվող տունը Հայաստանի կառավարության նվերն էր երկար տարիների դեգերումներից հետո դեպի հայրենի եզերքը դարձած բանաստեղծին՝ ծննդյան 70-ամյակի առթիվ: Կառավարության

որոշմամբ՝ 1945 թվականից սկսվում են տան շինարարական աշխատանքները: Տունը կառուցելիս, իհարկե, հաշվի են առել Վարպետի ցանկությունը: Շատ է ցանկացել, որ այն կառուցվի սրբատաշ սև տուֆով, ինչպիսին որ հայրական տունն էր Գյումրիում, և արտաքինից հայկական մատուռ հիշեցնի (շենքի նախագծի հեղինակը Պերճանույշ Մսրյանն է):

Տան բակում ծաղկաշատ մի հրաշք այգի կա, որտեղ, ինչպես հիշում է Վարպետի թոռը՝ Ավիկ Իսահակյանը, պահպանվել են նույնիսկ Վարպետի տնկած ծառերից մի քանիսը:

Բանաստեղծը սիրել է նստել այգու տուֆակերտ նստարանին և խորհել աշխարհի, սիրո, հավերժության մասին… Նստարանը ճարտարապետների միության նվերն էր Վարպետին՝ ծննդյան 80-ամյակի առթիվ: Մեկ ամբողջական տուֆից քանդակված նստարանը պատրաստվել է ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով:

Վարպետի մահվանից հետո՝ 1958 թվականին, Հայաստանի կառավարությունը որոշում է առանձնատունը վերածել բանաստեղծի անունը հավերժացնող տուն-թանգարանի, որն այցելուների առջև իր հյուրընկալ դռներն է բացել 1963 թվականի հոկտեմբերի 31-ից:

Թանգարանի ցուցադրությունը այցելուին է ներկայանում հուշային մասով և բանաստեղծի կյանքն ու գրական ժառանգությունը ներկայացնող մշտական ցուցադրությամբ:

Հուշային մասը կազմում են բանաստեղծի՝ առաջին հարկում գտնվող աշխատասենյակը, ննջարանը, հյուրասենյակը, ինչպես նաև գողտրիկ այգին: Այստեղ ամեն ինչ պահպանվել է այնպես, ինչպես եղել է Վարպետի կենդանության օրոք:

Թանգարանի ամենանվիրական հատվածը բանաստեղծի աշխատասենյակն է: Այստեղ կարելի է տեսնել Իսահակյանի հարուստ գրադարանը, հնօրյա գրասեղանը, բազմոցը, անձնական իրերը՝ գրիչը, ակնոցը, թազբեհը, «Աղջիկը և եղնիկը» սիրելի արձանիկը, քարեր՝ բերված Սևանա կղզուց...

Վարպետը սիրում էր առանձնանալ իր աշխատասենյակում և աշխատել մինչև ուշ գիշեր:

Այս գրասեղանի առջև են ստեղծվել Իսահակյանի վերջին բանաստեղծությունները՝ *«Ամեն ինչ ունայն, երազ անցավոր»*, *«Ավիկին»*, ինչպես նաև *«Հիշատակարանի»* մի շարք գրառումներ, հուշեր, նամակներ, հոդվածներ:

Հուշասենյակներից է նաև Իսահակյանների հյուրասենյակը, որտեղ բանաստեղծն ընդունում էր իր հյուրերին: Այստեղ էին սովորաբար անցկացվում գրական հավաքներ, տոնական խնջույքներ. ավանդական կարգով նշվում էին բանաստեղծի ծննդյան օրերը, Ամանորը, Զատիկը: Այս տանը հյուրընկալվել են մեր մշակույթի մեծերը՝ *Մարտիրոս Սարյանը, Հովհաննես Շիրազը, Հակոբ Կոջոյանը, Միլվա Կապուտիկյանը, վեհափառներ Գևորգ Վեցերորդը, Վազգեն Առաջինը:* Այստեղ են եղել նաև օտարազգի շատ նշանավոր մարդիկ՝ *Պաբլո Ներուդան, Ժորժի Ամադուն, Նիկոլայ Տիխոնովը, Գեորգի Լեոնիձեն, Մաքսիմ Ռիլսկին* և այլք: Վարպետի տունը դարձել էր յուրատեսակ ուխտատեղի:

Թանգարանի հուշային մասը եզրափակում է ննջարանը՝ իր համեստ ու պարզ կահավորանքով: Տպավորիչ է բանաստեղծի սնարի կողքին կախված սիրելի մոր՝ Ալմաստի լուսանկարը, որը միշտ անբաժան էր Իսահակյանից, և մոր սուրբ հայացքի ներքո էլ բանաստեղծը կնքեց իր մահկանացուն 1957թ. հոկտեմբերի 17-ի առավոտյան, քնի մեջ, ինչպես ինքն էր երազել՝ չզգալով մահվան պահը:

Թանգարանի բնական շարունակությունն է փոքրիկ այգին: Այգու խորքում՝ ստվերոտ ծառերի ներքո, տեղադրված է տուֆակերտ նստարանը: Քիչ հեռու բանաստեղծի 100-ամյակի նախօրեին տեղադրվեց Նիկողայոս Նիկողոսյանի կերտած՝ Իսահակյանի բրոնզաձույլ կիսանդրին և Նորայր Կարգանյանի նախագծած տուֆակերտ հուշապատը:

Գրական մասը ներկայացնում է Իսահակյանի կյանքը և ստեղծագործությունը՝ ձեռագրեր, տարբեր տարիների հրատարակություններ, լուսանկարներ, անձնական իրեր, կարևոր վավերագրեր:

Օրեր առաջ՝ հոկտեմբերի 30-ին, նշվեց Ավ. Իսահակյանի ծննդյան 143-ամյակը, ինչպես նաև՝ թանգարանի հիմնադրման 60 և գործունեության 55-ամյակները: Տոնական երեկոյի ընթացում տեղի ունեցավ «Իսահակյանական մասունքներ» գրքի շնորհանդեսը, իսկ ծրագրի հիմնական հատվածում հնչեցին Տիգրան Մանսուրյանի՝ Իսահակյանի բանաստեղծությունների հիման վրա գրված վոկալ ստեղծագործությունները, որոնք ունկնդիրներին տեղափոխեցին մի ուրիշ աշխարհ…

Իսահակյանի ստեղծագործությունների մասին խոսելիս Մաեստրոն ասաց նաև, որ իր համար դրանք մշտապես ներշնչանքի աղբյուր են եղել:

Շուշան Հովակիմյան
Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի
ավագ գիտաշխատող